ԸՆՏԱՆԻՔԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԷԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ

Ընտանիքի ապահովագրության պայմանագրով Դուք կարող եք ստանալ դրամային փոխհատուցում, եթե Ձեր կամ Ձեր ընտանիքի անդամների կյանքին կամ առողջությանը պատճառվել է վնաս, որն առաջացել է դժբախտ պատահարի կամ սխալ բժշկական մանիպուլյացիայի հետևանքով:

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ «ԼԻԳԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Հյուսիսային պողոտա 1
Հեռ.՝ (+374 12) 88 88 88
Կայք՝ www.liga.am

ԻՆՉԻՑ Է ՊԱՇՏՊԱՆՈՒՄ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ

Ապահովագրական պատահարներ են համարվում դժբախտ պատահարի կամ սխալ բժշկական մանիպուլյացիաների արդյունքում Ապահովագրված անձի կյանքին և առողջությանը պատճառված վնասներ, որոնք հանգեցնում են՝

- Մարմնական վնասվածքների,
- 1-ին, 2-րդ, 3-րդ խմբի հաշմանդամության ձեռք բերման,
- «Հաշմանդամ երեխա» կարգավիճակի ձեռք բերման,
- Մահվան:

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏ

Ապահովագրության վկայագիրը կնքվում է մեկ տարի ժամկետով:

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐ

- Հիմնական/լրացուցիչ անձի գույքային շահերը՝ կապված դժբախտ պատահարի կամ սխալ բժշկական մանիպուլյացիաների հետևանքով ապահովագրված անձի կյանքին և առողջությանը վնաս պատճառելու հետ,
- Ապահովագրության վկայագիր կարող է կնքել 18-70 տարեկան ցանկացած անձ (բացառությամբ 1-ին, 2-րդ խմբի հաշմանդամների, «Հաշմանդամ երեխա» կարգավիճակ ունեցող անձանց, մշտական անաշխատունակ անձանց, վինվորական ծառայություն անցնող անձանց և ապահովագրության պայմաններով սահմանված այլ անձանց),
- Ապահովագրության ծածկույթը տարածվում է ապահովագրության պայմանագիր կնքած անձի 3-70 (ներառյալ) տարեկան ընտանիքի անդամների վրա :

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Ապահովագրության պայմաններին ավելի մանրամասն կարող եք ծանոթանալ «ԼԻԳԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ-ի 22.05.2023թ. թիվ 06 արձանագրությամբ հաստատված Դժբախտ պատահարներից ապահովագրության պայմաններում՝ այցելելով ապահովագրական ընկերության պաշտոնական կայքը:

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐԻ ՉԱՓԸ

1,800,000 ՀՀ դրամ, մեկ անձի գծով ոչ ավել 500,000 ՀՀ դրամից:

ՈՐՔԱՆ Է ՀՀԱՏՈՒՑՎՈՂ ԳՈՒՄԱՐԸ

Հիատուցվող գումար չի նախատեսվում:

ՈՐՔԱՆ Է ԿԱԶՄՈՒՄ ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐԸ

Տարեկան 14,900 ՀՀ դրամ:

ԻՆՉ ՔԱՅԼԵՐ Է ԱՆՀՐԱԺԵՇՏ ՁԵՌՆԱՐԿԵԼ ՊԱՏԱՀԱՐԻ ԴԵՊՔՈՒՄ

- Պատահարի տեղի ունենալուց կամ հայտնի դառնալու պահից հետո անհապաղ, սակայն ոչ ուշ, քան 48 ժամվա ընթացքում վանգահարել «ԼԻԳԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ-ի (+374 12) 88 88 88 շուրջօրյա հեռախոսահամարին և հայտնել պատահարի մասին,
- Տեղի ունեցած ապահովագրական պատահարի նշաններ ունեցող իրադարձության մասին անհապաղ հայտնել համապատասխան իրավասու մարմիններին (ՀՀ Ոստիկանություն, Բժշկական հաստատություն և այլն):

ՈՐՈՆՔ ԵՆ ՀԱՏՈՒՑՈՒՄ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Ապահովագրական պատահարից հետո ոչ ուշ քան 45 աշխատանքային օրվա ընթացքում ապահովագրական ընկերության գրասենյակում լրացնել հայտային դիմումը կամ այն ուղարկել էլեկտրոնային եղանակով՝ ապահովագրական ընկերության մասնագետների կողմից տրամադրված կապի միջոցներով,
- Ներկայացնել անհրաժեշտ փաստաթղթերը,
- Սպասել ապահովագրական ընկերության հետագա ցուցումներին,
- Հատուցման կամ մերժման որոշումը կայացվում է հայտի կարգավորման համար բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը ստանալու պահից 15 աշխատանքային օրվա ընթացքում,
- Հատուցման գումարը վճարվում է հատուցման որոշում կայացնելուց հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում:

ՈՐ ԴԵՊՔԵՐԸ ՀԱՏՈՒՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՉԵՆ

Ցանկացած պարագայում հատուցման ենթակա չեն այն վնասները, որոնք առաջացել են հետևյալի արդյունքում.

- Ապահովագրողը չի հատուցում 1-ին, 2-րդ խմբի հաշմանդամներին, «Հաշմանդամ երեխա» կարգավիճակ ունեցող անձանց, մշտական անաշխատունակ անձանց կայուն նյարդային կամ հոգեբանական խանգարումներով և/կամ հիվանդություններով տառապող անձանց, անձանց, ովքեր հաշվառված են նյարդահոգեբանական և/կամ նարկոլոգիական և/կամ հակատուբերկուլյոզային դիսպանսերներում, ստացիոնար, ամբուլատոր բուժման կամ հետապտության մեջ գտնվող անձանց, էպիլեպսիայով, օնկոլոգիական հիվանդություններով, ՁԻԱՀ-ով կամ այլ իմունոդեֆիցիտային հիվանդություններով անձանց, անձանց, ում նկատմամբ իրականացվում է քրեական հետապնդում կամ ապատապրկման դատապարտված անձանց, առողջական վիճակից ելնելով՝ մշտական խնամքի կարիք ունեցող անձանց, վինվորական ծառայություն անցնող անձանց և/կամ Պայմանագրի/Վկայագրի կնքման պահին տարիքով չհամապատասխանող անձի կյանքին կամ առողջությանը պատճառված վնասները, բացառությամբ այն դեպքի, երբ Ապահովագրված անձը ձեռք է բերել հաշմանդամություն Պայմանագրի/Վկայագրի գործողության ընթացքում,
- Միջուկային պայթյունի, ճառագայթման կամ ռադիոակտիվ վարակման ներգործության արդյունքում առաջացած իրադարձությունները,
- Քաղաքացիական պատերազմի, ցանկացած տիպի ժողովրդական հուզումների կամ գործադուլների, ահաբեկչական գործողությունների նմանատիպ, կամ դրանց հավասարեցվող իրադարձությունների (անկախ պատերազմի կամ այլ իրադարձությունների հայտարարված լինելու հանգամանքից), ինչպես նաև զորաշարժերի կամ այլ ռազմական միջոցառումների արդյունքում առաջացած իրադարձությունները,
- 14 տարեկան և բարձր տարիք ունեցող հիմնական/լրացուցիչ Ապահովագրված անձի ինքնասպանության (ինքնասպանության փորձի) արդյունքում, բացառությամբ այն դեպքերի, երբ հիմնական/լրացուցիչ Ապահովագրված անձը հասցվել էր նման վիճակի երրորդ անձանց անօրինական գործողությունների արդյունքում,
- 14 տարեկան և բարձր տարիք ունեցող հիմնական/լրացուցիչ Ապահովագրված անձի կողմից դիտավորյալ հանցանք գործելու հետևանքով,
- 14 տարեկան և բարձր տարիք ունեցող հիմնական/լրացուցիչ Ապահովագրված անձի ալկոհոլով (ալկոհոլ պարունակող նյութերով), ինչպես նաև թմրանյութերով, տոքսիկ նյութերով թունավորումը, եթե իրավասու մարմինների կողմից չի սահմանվել նրանց բռնի ներարկումը, սխալմամբ օգտագործումը,
- 14 տարեկան և բարձր տարիք ունեցող Ապահովագրված անձի կողմից իրեն դիտավորյալ մարմնական վնասներ հասցնելը, ապահովագրված անձի կողմից սպորտի վտանգավոր տեսակներով (ավտո- և մոտոսպորտ, օդային սպորտ, ձիասպորտի ցանկացած տեսակներ, մարտարվեստի տեսակներ, ալպինիզմ, լեռնային և ջրային զբոսաշրջություն, ստորջրյա նավարկություն, հրաձգային սպորտ և այլն) զբաղվելը կամ գիտակցաբար իրեն բացառիկ վտանգի ենթարկելը,
- «ԼԻԳԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ-ի 22.05.2023թ. թիվ 06 արձանագրությամբ հաստատված Դժբախտ պատահարներից ապահովագրության պայմաններով նախատեսված այլ դեպքերում:

ԿԱՐԵՎՈՐ Է ԻՄԱՆԱԼ

Ապահովագրական ընկերության հատուցման որոշման հետ համաձայն չլինելու դեպքում Դուք իրավունք ունեք դիմել Ֆինանսական համակարգի հաշտարարին, Կենտրոնական բանկ, Դատարան/Արբիտրաժային դատարան:

Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից: